«ԿՈՐԻԶ» ԱՅԳԵԶԱՐԴԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ

Այգեզարդ *0709*, *Պ.Սևակի 27, էլ. հասցե՝ korriz.2021@gamil.com, հեռ.՝ +374 94903914*

*11.12.2025*թ.
Ե-Վ/*11/25*

Վեդի խոշորացված համայնքի

ղեկավար՝ Գարիկ Սարգսյանին

«Կորիզ» Այգեզարդի
երիտասարդական և

համայնքային զարգացման կենտրոն ՀԿ

նախագահ՝ Արփինե Խաչատրյանից

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի՛ պարոն Գարիկ Սարգսյան,

Ի պատասխան 01.12.2025թ. էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի միջոցով ուղարկված գրության ստացել եմ պատասխան, որ ներկայացված դիմումը չի համապատասխանում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին: Վերջինիս համաձայն գրավոր հարցման մեջ նշվում է՝

- դիմողի անունը, ազգանունը,
- բաղաքացիությունը,
- բնակության, աշխատանքի կամ ուսումնական հաստատության գտնվելու վայրը,
- գրավոր հարցումը պետք է ստորագրված լինի (իրավաբանական անձի դեպքում՝ դրա անվանումը, գտնվելու վայրը):

Հարցումների միասնական հարթակ հնարավոր չէ մուտք գործել առանց ID բարտով նույնականացման, համապատասխանաբար՝ դիմողի անունը, ազգանունը, քաղաքացիությունը և բնակության հասցեն ինքնաստինքյան արտացոլված են (տե՛ս նկար 1):

Հարցումն ուղարկված է կազմակերպության ձևանմուշով, ինչը ենթադրում է, որ ձևանմուշի գլխամասում առկա տեղեկատվությունը վերաբերելի է կազմակերպությանը (տե՛ս նկար 2): Այն լիովին ապահովում է հոդվածի պահանջները՝ անվանում, գտնվելու վայր:

Եվ, վերջապես, հարցումը ստորագրված է էլեկտրոնային տարբերակով՝ նույնականացման բարտով, հակառակ դեպքում համակարգն այն չէր ընդունի:

Ուստի, ստորև կրկին ներկայացնում եմ նախորդ գրությամբ ներկայացված տեղեկություն ստանալու հարցման բովանդակությունը:

Ի պատասխան Վեդի խոշորացված համայնքի աշխատակազմի բարտուղար Հրաչյա Ստեփանյանին ուղարկված գրության, որտեղ խնդրել էի հայտագրել իմ ելույթը նիստի օրակարգում ներառված՝ «Օրդ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից Կարմիր սարի կրաբարային մերգելների օգտակար հանածոյի արդյունահանման գործունեությանը ավագանու կողմից նախնական համաձայնություն տալու հարցի քննարկման ընթացքում, ստացել եմ պատասխան նամակ, որի համաձայն, իմ դիմումը պետք է բավարարվեր՝ ըստ Վեդի համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 28-ի N 15-Ա որոշմամբ հաստատված կանոնակարգի:

«ԿՈՐԻՁ» ԱՅԳԵԶԱՐԴԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ

Այգեզարդ *0709*, *Պ.Սևակի 27, էլ. հասցե՝ korriz.2021@gamil.com, հեռ.՝ +374 94903914*

Ավագանու նիստի ընթացքում, Հրաչյա Ստեփանյանը, նիստին մասնակցելու և ելույթի հնարավորություն տրամադրելու հարցերի հետ կապված՝ կրկին հղում կատարեց վերոնշյալ կանոնակարգին: Մասնավորապես, մինչ բննարկումը սկսելը, նա կանոնակարգից ընթերցեց բաղվածք, մեջբերեց կետեր, որոնք վերաբերում էին նիստին մասնակցելու և ելույթներ ունենալու կանոնների: Վեդի Համայնքի ավագանու հերթական նիստը 19.11.2025 -ի տեսագրության 2:22:12 վայրկյանից սկսած՝ նա ընթերցում է վերոնշյալ բաղվածքը, սակայն ձայնի ցածր որակը հնարավորություն չի տալիս լսելու, թե կոնկրետ որ կետերին է հղում կատարում պարոն Ստեփանյանը:

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42–րդ և 51–րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6–րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. պատասխան գրությամբ ներկայացնել, թե իմ կողմից 01.12.2025թ. էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի միջոցով ուղարկված հարցումը ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի վերոնշյալ պահանջներից կոնկրետ ո՞ր պահանջին չի համապատասխանել, որի պատճառով թողնվել է անհետևանք,
2. տրամադրել Վեդու համայնքապետարանի կայքում 2022 թվականի ապրիլի 28-ի N 15-Ա որոշմամբ հաստատված կանոնակարգի առցանց (ակտիվ) հղումը, կամ, եթե այն հրապարակված չէ՝ փաստաթուղթի պատճենը,
3. կանոնակարգի այն բոլոր կետերի ցանկը, որոնց, բաղվածքն ընթերցելիս, հղում է կատարել է պարոն Հրաչյա Ստեփանյանը:

Կանխավ շնորհակալ եմ:

Խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9–րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության տրամադրման համար պատրաստ եմ վճարել հավելյալ գումար:

Հարգանքով՝

Արփինե խաչատրյան